Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

301
x - 85

ยกยกษ ๔๑
๓ ๐๒ ๖๑๔๔

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՅԼ ԱՂՕԹՔ՝
Դ ՊԷՏՈ ՄԱՆԿԱՆՑ՝
ԹՐՑ Է ԿԷՂԵՑՒՈՅ ՀԱՅ ԱՌՏԱՆԵԼԵՅՑ։
Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ՚Ն. Տ՚Ն. ՄԱՏԹԷ
ՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ Տ՚Ն. ԹԱՊԷ-
ՈՍԻ ՀԱՆՊՈՒՅԵԱԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ՝
ՍՐԲՈՅ ԱՄԵՆԱՓՐԿՉԻ ՎԱՀԱՆԱՅՆ
ՋՈՒՂԱՅՈՅ։

ԱՇԻԱՏԱՍԻՐԵԱՑ
ՏԵՐ ՍԵՂԲԵՍՏՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ՝
ՎԻՃԱԿԱՒՈՐ ՓԱՀԱՆԱՅ ՀԱՅՈՑ՝
ՈՐ
Դ ԿԱՒ ԿԱԹԱ։

ՏՊԱԳՐԵԱԼ Դ ՏՊԱՐԱՆԻ ՄԻՍՈՆԱՐԱՅ։
ՅԱՄԻ 1863. ՌՈՅԹ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՅԼ ԱՂՕԹՔ

Ի ՊԷՏՍ ՄԱՆԿԱՆՑ

ԾԲՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅ ԱՍՏԱՆԵԱՅՑ։

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ. ՏՆ. ՄԱՏԹԷՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏՆ. ԹԱԴԷՈՍԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍՐԲՈՅ ԱՄԵՆԱՓՐԿՉԻ ՎԱՆԱՅՑ ՋՈՒՂԱՅՈՅ։

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

ՏԷՐ ՍԵՂԲԵՍՏՐՈՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ՎԻՃԱԿԱՒՈՐ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅՈՅ

ՈՐ

Ի ԿԱԼ ԿԱԹԱ

ՏՊԱԳՐԵԱԼ Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻՍՈՆԱՐԱՅ։
ՅԱՄԻ 1863. ՌՅԺԲ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

301
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՀՊԱՆԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ։

Աստային բերան կնքէ ասելով «Ո՛ր հայցէ՝ գտանէ՝ Արդ՝ փա՛ռք պարգևողին բարեաց, զի յետ բազում հայցուածոցս 'ինմանէ, հասի այժմ հոգևորն տենչանաց իմոց։ Իմա՛ զքրիստոնէական վարդապետուն՝ որ ըստ ուղղափառ դաւանութե՛ն՝ Քսապսակ Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ յօրինեալ կայր, դարձուցանելով իմ զայն 'ի պարզ և յաշխարհիկ ոճ, և պատշաճաւոր վկայութե՛ն Աստուածունչ տե՛ր գրոց և Հարցն սրբոց՝ հաստատեալ, մարթացայ 'ի լոյս ընծայել 'ի պէտս և 'ի դիւրութի՛ մանկանց Եկեղեցւոյ։

Դարձեալ՝ արժան համարեմ արդարև 'ի սրտէ զշնորհակալիս իմ մատուցանել առ Յարգոյ Պրն կաթողիկոս Յ, վարդանիսեան, որ է կառավարիչ տեղեաց Եկեղեցւոյն Նազարեթայ, զի այնինչ զծախս տպագրութե՛ն սորա խնդրեցի 'ինդկէ նոյն Եկեղեցւոյ, նա օժանդակելով յարգեաց զխնդիր իմ։

Հապա մանկունք նորոյս Սիոնի, ընկալարո՛ւք զայս ձեռն սիրոյ, զոր իբրև զհոգեպարար և զմաքուր կաթն

Ամենային պատգամաց ջամբեմ Ձեզ տղայոցդ 'ի Քրիստոս ընտրեալսն։ Եւ 'ի Ձենջ մաղթեմ, զի բարուք ուշադրութիւն ընթեռնլով զայս, տպաւորեսջիք 'ի Հոգիս և 'ի միտս ձեր զբանն Աստուծոյ, որով և անշուշտ կարասջիք հասանել փրկութեան հոգւոյ և մարմնոյ։

Մնամ

Տեառն Ծառայ անպիտան

Տէր Սեղբեստրոս Յովհաննիսեան։

Աշխարհաքաղաք քրիստոնէականութիւն :

Մասն Առաջին :

—

Հարց. Դու քրիստոնեայ ես :

Պատ. Հրամէլաս քրիստոնեայ եմ քանի շնորհօքն : Ա Կորն. ԺԵ. 10 : Գործ: ԺԱ. 26 : Գաղ. Գ, 27 : Փիլ. Բ. 12 : Ա. Պետ. Դ. 16 :

Հ. Քրիստոնէի նշանն ինչպէ՞ս :

Պ. Քանի սուրբ և պատուական խաչնայ : Մատ. ԻԴ. 30 :

Հ. Խաչակնքիր տեսնեմ ո՞րպէս ես խաչակնքում :

Պ. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :

Հ. Ո՞վ այ ստեղծէլ քեզ :

Պ. Ամենակարող Աստուածն : Ծննդ. Ա. 27. Բ. 7 :

Հ. Ընչո՞ւր համարայ ստեղծէլ :

Պ. Որ իւրն ճանաչեմք, իւր կամքն կատարեմք. և վերջումն արքայութիւնն արժանանամք : Մատ. ԺԶ. 17 : Յովհ. Է, 28 : Հռոմ. ԺԲ. 2 : Յովհ. Ե. 24 :

Հ. Աստուած ո՞վ է։

Պ. Երկնքի և երկրի, երևելի և աներևոյթ արարած ոյ ստեղծողն է։ Ծննդ. ա. 1։ իմաստ. թ. 1։ կոչ. ա. 16։

Հ. Աստուած քանի՞ դանայ է։

Պ. Մին դանայ է. բոյց երեք անձն են, Հայր, Որդի. և Հոգի սբ։ Անդ. բ. 6։ Յովհ. ա. 1։ ա. Յովհ. ե. 7։

Հ. Ո՞րքան Հայրն Աստուա՞ծ է։

Պ. Հրամելաս Աստուածոյ է։ ա, պետ. ։ ա. 2. 3։

Հ. Որդին Աստուա՞ծ է։

Պ. Հրամելաս Աստուածոյ է։ Յովհ. ա. 1։ Հռոմ. թ. 5։ ա. Յովհ. ե. 20։

Հ. Ո՞ւրբ Հոգին Աստուա՞ծ է,

Պ. Հրամելաս Աստուածոյ։ Ոչ, լբ. 6։ Մատ. գ. 16։ Յովհ. գ. 24։

Հ։ Ո՞ւրքան երե՞քք Աստուած են։

Պ. Ո՛չ, մի Աստուածոյ, և երեք անձն, ա. Յովհ. ե. 7։ բ, կորն, ժգ. 13։

Մասն Երկրորդ։

Հ. Այս երեք անձնիցն ո՞ր անձն մարմին առաւ։

Պ. Միայն Որդին Աստուա՞ծ մարմին առաւ, Յովհ. ա. 14։

Հ. Ինչպէ՞ս մարմին առաւ։

Պ. Մեզ նման կատարեալ մարդ դարձաւ՝ մարիամ սուրբ կուսի մաքուր արնից մարմին առնելով։ մատ, ա. 21։ Ղուկ. ա. 31։

Հ. Ի՞նչ օրում մարմին յինք առէց։

Պ. Ապրիլի ամսոյ 7ին։ Ղուկ. ա. 26։

Հ. Ինչա՞յ յինքառածն։

Պ. Մարդկային հոգի, միտք և մարմին։ 'ի հանգ։

Հ. Ինչպէ՞ս յինքառնողն և յինքառածն՝ մի անձն և մի բնութիւն կլինեն։

Պ. Քանզի բանն Աստուծ մարդկուին էնպէս միաւորէց իւր անձնի և բնութեան հետ, որպէս մեր մարմինն միաւորուէլայ մեր հոգւոյ հետ, և ենր հետ մի բնուիայ եէլէլ առանց շփոթման, էսպէսէլ մարդկուին միաւորուէց բանին Աստուծոյ անձնի և բնութեան հետ, և մի Աստուածամարդկային բնութիւն եէլաւ նորա հետ առանց շփոթման և առանց փոփոխման, որպէս վկայումեն սուրբ հարքն Աթանաս, կիւրեղ և այլք։

Հ. Յիսուս ասելն ի՞նչ ասելայ։

Պ. Փրկիչ ասելայ, քանզի փրկէց մեզ սատանայի ձեռնից. և դժոխքի տանջանքից։ մատ. ա. 16։ Ղուկ, բ. 21։

Հ. Քրիստոս ասելն ի՞նչ ասելայ։

Պ. Օծեալ ասելայ, քանզի մարդ դառնալով ծնուէց Աստուծոյ Հօրիցն սուրբ Հոգւովն։ մատ. ԺԷ. 16։ Յովհ. Ը. 70։ Գործ. Ժ. 38։

Հ. Մեր Տէր Յիսուս Քրիստոսն ինչ օրէնքով ծնուէց,

Պ. Յունվարի ամսոյ 6 ին։ Ղ. Շնորհ. 'ի Թղթ. առ մանուէլ կայսր։ Ղուկ. Բ. 6։

Հ. Ինչ տեղ ծնուէց։

Պ. Բեթղահէմ քաղաքումն անբաններէրի ախոռումն։ մատ. Բ. 1։

Հ. Ումից ծնուէց։

Պ. Մարիամ կուսից՝ որպէս վերն ասուէց։

Հ. Մարիամ Աստուածածինն կոյս մնաց ծնանելուցն հետ։

Պ. Հրամէլաս՝ քանզի անսերմն յղացաւ, և առանց ապականուէ ծնաւ, վասն ծնանելուցն յետ կոյս մնաց։ 'ի Շարակ։

Հ. Քրիստոս իւր Աստուածութիւնն ծնուէ՞լ էր Հօրից։

Պ. Հրամէլաս ծնուէլ էր։ մատ. Ա 20։ Սաղ. Զբ. 27. 28։ կողոս. Ա. 15։

Հ. Իւր մարդկութիւնն ծնուէց մօրից։

Պ. Հրամէլաս ծնուէց։ մատ. Ա. 25։ Եսայ. Է. 14։

Հ. Առաջին ծնունդն ինչ պէս էր։

Պ. Անժամանակ և անմարմին ծնունդ առանց մօր։
Պաղ. Ա. 27. 28։ Դիմամաք։

Հ. Երկրորդ ծնունդն ինչ պէտք էր։

Պ. Ժամանակով և մարմնով ծնունդ առանց հօր։
Ղուկ. Բ. 6։

Հ. Քրիստոս քանի՞ տարեկանէր որ եկաւ մկրտուի։

Պ. Երեսուն տարեկան էր։ Ղուկ. Գ. 23։

Հ. Ինչ ամսում մկրտուեց։

Պ. Յունվարի 6 ին, ինչ օրում որ ծնուել էր. երեսուն տարէն յետոյ նոյն օրն մկրտուեց։ Ն՝ Շնորհ, Փիլիպ, առմանուել կոյսը։

Հ. Ո՞մ ձեռամբն մկրտուեց Քրիստոս։

Պ. Յովհաննէս մկրտչի ձեռամբն։ Մատ, Գ. 13։

Հ. Ի՞նչ տեղ մկրտուեց։

Պ. Յորդանան գետումն։ Մարկ. Ա. 9։

Հ. Ի՞նչ աքանչելիք ելան էն տեղն։

Պ. Ամենակալ հայրն ձայնիւն, և հոգին սուրբ վէր գալովն յայտնեցին Քրիստոսի Աստուծին, վայ ծննդեան և յայտնութեան օրայ կանչման։
Մատ, Գ, 16. 17։

Հ. Քրիստոս քանի՞ տարի շրջեցաւ երկրի վերայ։

Պ. Երեսուն երեք տարի և կէս։

Հ. Էնքան ժամանակ ի՞նչ արէց։

Պ. Ճշմարտութեան ճանապարհն սովորացրէց իւր

հետևողներին Յովհ. ԺԴ. 24 : ԺԲ. 23 : Գ, 10
Մատ. Ը. 3. 4, 5.6—12. 44 : ԻԲ. 3 :

Հ. Յետոյ ի՞նչ արէք :

Պ. Իւր կամքովն չարչարուէց խաչուէց, և մեռաւ մեր մեղքի համար : Եսայ, ԾԳ, 4. 5. 8. 12 : Եր, կորն, ԺԸ, 3 :

Հ. Ի՞նչ տեղ խաչուէց և մեռաւ :

Պ. Գողգոթայ սարումն : Մատ, ԻԷ, 33. 34. 35

Հ. Ընդ ո՞ր մեռաւ :

Պ. Մեր փրկութեան համար : Եսայ. ԾԳ. 5 :

Հ. Ընչո՞ւ վերայ մեռաւ :

Պ. Փէտրէ խաչի վերայ : Գործ. Ը. 23 :

Հ. Եթէ քրիստոս Աստուածէր ի՞նչպէս մեռաւ :

Պ. Զեմ ասում թէ Աստուածային բնութիւնն մեռաւ, այլ մարնոյն, այսինքն անճառելի միաւորութիւնն, վասն որոյ ասմանայ Աստուած խաչուէց և մեռաւ, Ես. Շնորհ, 'ի թղթ. առ քահանայս, Եր : Պետ, Գ. 18 :

Հ. Քրիստոսի մարմինն մեռանելուցն յետո ի՞նչ արին :

Պ. Վերբ բերին խաչիցն, և դրին նոր բորած գերեզմանի մէջ, անբաժանելի աստուածութիւնն: Գործ, ԺԴ. 29: Մատ, ԻԷ, 59, 60 :

Հ. Քանի՞ օր մնաց գերեզմանումն :

Պ. Երեք օր, Մատ, ԺԲ, 40 :

Հ. Ընչովք գնաց դժոխքն։

Պ. Բանական հոգւովն։ ա, Պետ, Գ. 19։

Հ. Գնաց դժոխքն ի՞նչ արէց։

Պ. Դժոխքն աւերէց, և արդարոց հոգիքն ազատէց էն բանտիցն, 'ի Շարպկ։ Եսայ, խբ. 7։ ԽԹ, 9։

Հ. Յետ երեք օրիցն ի՞նչ եղաւ Քրիստոսի մարմինն։

Պ. ՅարուԹի առէց, և մեզ բոլորիս ևս ՅարուԹի առնելոյ հաստատ յոյս պարգևէց. Մատ. Իբ. 6։ Յովհ, Ե, 27—29։ ժԳ. 3։ Եբ, Թեսաղ, ա. 5—7։

Հ. ՅարուԹի առնելուցն յետ ի՞նչ արէց։

Պ. Իւր աշակերտացն պատուիրէց որ գնան բոլոր աշխարհն և քարոզեն աւետարանն, և ինքն համբարձուէց յերկինքն և հօր աջկողմն նստաւ, Մատ, իԹ, 19։ Մարկ. ժԶ, 19։

Հ. Համբարձուելովն ի՞նչ յոյս պարգևէց մեզ Քրիստոս։

Պ. Ա՛յն յոյսն Թէ, որպէս ինքն մարդկուԹեանն չարչարուելով փառաւորուէց յերկնքումն, նոյնպէս և արդարքն կփառաւորուեն։ Մատ, ԺԳ. 43։ Կորնթ, Գ, 4։ Իմաստ. Գ. 7։

Մասն Երրորդ։

Հ. Սուրբ Եկեղեցի ասելն ի՞նչ ասելայ։

Պ. Եկեղեցին ամ հաւատացեալ քրիստոնէից ժողովքնայ, որ մկրտուած են Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անուամբն։ Գործ, Ը. 11 Ը. 3։ Եփես, Ա, 22։

Հ. Եկեղեցւոյ խորհուրդն ի՞նչայ։

Պ. Հոգևոր ազատութիւնայ։ Ա. Կորն, Գ, 17 Հռով. Գ. 22։

Հ. Քանի՞ դանայան։

Պ. Եօթնեն, Մկրտութիւն. Դրոշմ. Հաղորդութիւն Ապաշխարութիւն. Ձեռնադրութիւն. Պսակ. և վերջին օծումն, Յակ. Ա. 17։ Յակ. Ա, 17։

Հ. Մկրտութիւն ի՞նչայ։

Պ. Լուացուելնայ մարմնոյ դրսիցն և մաքրուելնայ Հոգւոյ ներսիցն, և ազատութիւնայ սկզբնական մեղքիցն։ Մատ. Իշ. 19։

Հ. Դրոշմն ի՞նչայ։

Պ. Մին խորհուրդայ որ երբ կօծեն մեռոնով մարմնոյ գլխաւոր անդամքն, կպարգևուի հաւատացելոյն անհերևութաբար սուրբ Հոգւոյ շնորհքն։ Գործ. Ա, 8։ Ժթ. 6։ Մատ, Գ. 16

Հ. Հաղորդութիւն ի՞նչայ։

Պ. Մեր Տէր Յիսուսի Քրիստոսին և Աբիւննայ,

Հոգևոր կերակուրայ. որ կտայ մեզ ժառանգել յաւիտենական կեանքն։ Յովհ. Զ, 55։

Հ. Ապաշխարութիւն ի՞նչայ։

Պ. Մին խորհուրդայ, որ հաւատացեալն Ճշմարտապէս փոշմանելով իւր մեղքն, թողութիւն կինդրի քան շնորհիւն, և մեղաց քաւութիւն կստանայ Աստծանից, խոստովանահօր ձեռամբն. Մատ. Գ. 17։ Գործ. ԺԷ. 30։ ԺԹ. 18։

Հ։ Ձեռնադրութիւն ի՞նչայ։

Պ. Մին խորհուրդայ, որ հաւատացեալն Եպիսկոպոսի ձեռնադրութեանն, կարգվումայ Եկեղեցւոյ խորհուրդն կատարել, և քան ժողովուրդն կառավարել։ Գործ. ԺԳ, 22։ Ի. 28։

Հ. Պատկն ի՞նչայ։

Պ. Եկեղեցւոյ մին խորհուրդայ, որ մարդին և կնոջն կկապի միմեանց հետ, և քահանայի աղօթիւքն օրհնութիւն կստանան Աստծանից. իւրեանց փոխադարձ համաձայնութեան և որդեծնութեան համար։ Ծննդ. Բ. 27. 28։ Ի. 23։ Մատ. ԺԹ. 6։ Եփես. Ե. 32։

Հ. Վերջին օծումն ի՞նչայ։

Պ. Մին խորհուրդայ, որ հաւատացեալն երբ հիւանդանի (թէպէտ յառաջ մեռանով կօծուէր քահանայէն, բայց ներկայ միայն) աղօթիւք կստանայ

բըժշկութիւն և մեղացն թողութիւն : Մատ , ԺԲ. 8։
Մարկ . Ղ . 13։ Յակ . Ե ,14 :

Հ . Ապաշխարութիւն ի՞նչայ :

Պ . Մտաց ունակութիւն , որ կատանայ Հոգին և
կենի բարեգործ :

Հ . Քանի՞ դանայեն :

Պ . Եօթն են , Հաւատ , Յոյս , Սէր , Արիութիւն ,
Արդարութիւն , խոհեմութիւն և Ողջախոհութիւն :

Հ . Հաւատն ի՞նչայ :

Պ . Աստուծոյ մին պարգևայ , որ նրանով կճանա-
չեմք մեր ստեղծող և ամենազոր Աստուածն ,
և կհաւատամք Աւետարանի ճշմարտութիւնն :
Եբր , ԺԱ . 1։ Ա : կորն , ԺԳ , 13։ Յակ . Բ ,
19 , 22 . 24 :

Հ . Յոյսն ի՞նչայ :

Պ . Մին ստոյգ ակնկալութիւն հանդերձեալ բարեացն ,
որ կտայ Աստ հատուցման օրուն : Գործ . ԻԲ .
15։ Բ . կորն , Ա . Ղ : Տիտ , Ա . 2 : Բ . 13 :

Հ . Սէրն ի՞նչայ :

Պ . Մտաց ունակութիւն այ , որ նրանով սիրումանք Աստ-
ուծ բարութիւնն համար , և մեր ընկերին մեզ
հաւասար։ Աստուծոյ պատուիրանքն կատարելոյ
համար : Մատ , ԻԲ . 37. 38։ Մարկ , ԺԲ .
30։ Ղուկ . Ժ . 29, 38։ Բ . որին , Ե .43.44։

Հ. Աղիուլթիւն ի՞նչայ։

Պ. Մին առաքինութիւնայ, որ ներանալ ընդդէմ կկամք աշխարքի փորձութեց կամ նեղութեցն, և կսպասեմք ապագայ երջանկութեն։ Գործ. ԺԳ, 21։ Հռովմ, Ը, 18. 28։ Յակ, Ա, 23։ Ե, 7. 8։

Հ. Աղդարութիւն ի՞նչայ։

Պ. Հաւասար բաժանելնայ հոգւոյ և մարմնոյ մէջ, և իրաւունք պահելնայ թէ խօսքի և թէ գործոց մէջ։ Մատ. Է, 12։ Տիտ, Բ. 12։

Հ. Խոհեմութիւն ի՞նչայ։

Պ. Մին ընտրութիւնայ. որ պէտքայ առնեմք բարւոյ և չարի մէջն, մին մարդոյ չիտաքեմք, և միւս մարդիցն չիտաքուեմք։ Մատ, Ժ, 16։ ԺԶ, 26։ Ղուկ. Ա, 17։ Հռովմ, Ը, 6։ ԺԲ. 16։

Հ. Ողջախոհութիւն ի՞նչայ։

Պ. Սիրտն անարատ և վարքն մաքուր պահելնայ, և հեռի կալնայ մարմնական ցանկութենից։ Դանիել, Լ Թ, 10։ Ղուկ, Իա, 34։ Հռովմ. ԺԳ. 13։ ԺԶ, 17։

Հ. Քանի՞ դանայ ան ոք հոգւոյ պարգևքն։

Պ. Եօթն են, այսինքն՝ Իմաստութիւն. Հանճար, խորհուրդ. Զօրութիւն, Գիտութիւն, Աստ

ուածպաշտութիւն, և երկիւղ Աստուծոյ։ Եսայ։ ԺԹ. 2. 3։

Հ. Ողորմութիւն գործքէրն քանի՞ դանայան, որ կը-յիշուեն դատաստանի օրուն։

Պ. Եօթն են, այսինքն՝ կերակուր տալ սոված մարդկանց, ջուր տալ ծարաւ մարդկանց, հագուստ տալ տկլոր մարդկանց. ընակութիւն տալ օտարաց, տեսութիւն գնալ հիւանդաց, տեսութիւն անել բանտընկած մարդկանց, թաղել մեռելոց, ըստոնքան մարմնաւոր ողոր-մութիւնքն։ Մատ, իԷ, 35։

Հ. Հոգեւոր ողորմութիւնք ևս կա՞ն։

Պ. Հրամէլաս՝ եօթն ևս հոգեւոր ողորմութիւնք կան. այսինքն, խրատել երկմիտ մարդկանց։ Ճա-նապարհ ցոյց տալ ոգէտ մարդկանց։ Աստել մեղք սիրող մարդկանց։ Մխիթարել տխուր մարդկանց։ թողնել պարտքն։ Ներողութիւն յանձն առնել։ Աղաչել Աստծոյն կենդանեաց և մեռելոց մեղաց համար։ Բ. օրին, Դ. 9. 10, Առակ. Դ, 9. 12. 13։ ԺԹ, 25։ Մատ, ԺԳ, 52։ Իե. 14։ Ղուկ, Թ, 60։ Հռովմ. Բ, 19։

ԼՐԱՆ ՀՈԳՈՒՏ :

Հ. Աստուծոյ օրէնքն ի՞նչ է :

Պ. Օրէնքն Աստուծոյ դաշինն է, որ մարդոյ հետ դրէց. և խոստացաւ նրան յաւիտենական երանութիւն : Ղևտ. ԺԸ. 5 :

Հ. Օրինաց բանքն քանի՞ դանայ են :

Պ. Տասն են, որ կկոչուին Աստուծոյ պատուիրանք :

Հ. Առաջին պատուիրանքն ո՞րն է :

Պ. Ես եմ քո Տէր Աստուածն : բաց ինձանից չլինի քեզ այլ աստուած : Ելք. Ի. 3 :

Հ. Այս պատուիրանքն ի՞նչ է հրամայում :

Պ. Ճանաչել սրտով, և դաւանել խօսքով թէ միմն Ամ կայ, և նրան քան աշխարհիս բոլոր քանէրին ուսուել սիրել և պատուել. և միայն նրան յուսանալ : մատ, Իբ. 37 : Յակ. Գ. 10, Պաշ, Ձ, 11 :

Հ. Երկրորդ պատուիրանքն ո՞րն է :

Պ. Քեզ համար կուռք մի շինել, ինչ տեսակ իքմինից որ երկնքումն երկրումս և ջրի մէջ կան, երկրպագուութիւն չտաս նոցա և չպաշտես : Ելք, Ի, 4. 5:

Հ. Այս պատուիրանքն ի՞նչ է արգելում:

Պ. Արգելումն է որ արարածնէրին աստուածավայ-

ելուէ պատիւ չտուամք , և ոչինչ բան չսիրեմք յաշխարհի մէջ որպէս Աստ : Ղևտ , ԻԶ , 1 : Բ . Օրին , Ե , 8. 9 : Ելք, ԼԵ : 17: Գործ , Ժ . 22.

Հ . Երրորդ պատուիրանքն ո՞րնայ :

Պ . Քոյ Անյ անունն չդնես սնոտի բանէրի վերայ : Ելք , Ի , 7 :

Հ . Այս պատուիրանքն ի՞նչ այ արդելում :

Պ . Արդելումայ՝ որ Աստ անունն չյիշեմք սուտ խոստմանց մէջ , և ունայն երդում ուտելոյ մէջ : Մատ . Ե . 34 : Ղևտ , ԺԹ . 12 : Ղ , Շնորհ , ընդհ , 'ի բանն առ երկրագործս :

Հ . Չորրորդ պատուի բանքն ո՞րնայ :

Պ . Յիշիր որ շաբաթ օրն սուրբ պահես , (որ մեզ կիւրակէ) : Ելք, Ի , 8—11:

Հ . Այս պատուիրանքն ի՞նչայ հրամայում:

Պ . Տէրունական տոնէրին կամ կիւրակէ օրն թողնել ամ գործ և առևտուրն , Գնալ Աստ տունքդ Եկեղեցի , վա աղօթելոյ , և Աստ բանիցն ունկնդիր լինել , և այն որ սուրբ պահել բարեգործուք , և ողորմութի տալով : Ղևտ . ԺԹ , 3: Իդնատ . Գլ , Ղ , 'ի թղթ առ մաղնիասցիս ,

Հ . Հինգերորդ պատուիրանքն ո՞րնայ :

Պ. Պատիւ տուր՝ քոյ հօրն և մօրն, որ քո համար բարի լինի, Ելք, Ի. 12։

Հ. Այս պատուիրանքն ի՞նչայ հրամայում,

Պ. Սրտով և մտքով միշտ սիրել և պատուել մեր ծնողացն, պատուել և հնազանդել թագաւորաց, հոգևոր և մարմնաւոր իշխանաց, կամ Ռաջնորդաց, քհնյից, բարերարաց և ծերոց։ Եփես, Զ, 1։ Ա, Պետ, Բ, 17։ Եբր, ԺԳ, 17։ Ղևտ, ԺԲ, 32։

Հ. Վեցերորդ պատուիրանքն ո՞ինայ։

Պ. Մի՛ սպանաներ, Ելք, Ի, 13։

Հ. Այս պատուիրանքն ի՞նչայ արգելում։

Պ. Ո՛չ միայն արգելումայ մարդ չսպանեմք, այլ մին մարդոյ մեռնելն ևս չցանկանամք սպանուելեն խորհուրդ չտամք, մեր ընկերաց չզրկեմք, այլ օգնական լինեմք։ Ելք, ԻԳ. 7։ Մատ, Ե, 21։ ԺԲ, 6։ Ա, Յովհ, Գ. 25։

Հ. Եօթներորդ պատուիրանքն ո՞ինայ։

Պ. Մի՛ շնար։ Ելք, Ի, 14։

Հ, Այս պատուիրանքն ի՞նչայ արգելում։

Պ. Արգելումայ որ մարդս իւր անձն չմատնի ամօթալի կրից, և շռայլ ուտել խմելու մէջ, և անխոհեմաբար չհետևի չարօրինակ մարդկանց։ Ա. Կորն, Զ, 18։ Բ, Կորն,

Է. 1 : Ղուկ , ԺԲ , 34 : Եփես , Է . 3. 4.

Հ , Ովքերորդ պատուիրանքն ո՞ր ինչ է :

Պ . Մի՛ գողանար : Ելք , Ի , 15:

Հ . Այս պատուիրանքն ի՞նչ է արգելում :

Պ . Արգելում է որ օտարի իքսինն չտիրեմք յոյժ կամ ծածուկ , բռնութիւն կամ խաբելով , վաստակեցն յաւել վարձ չինք չառնեմք , կամ վաճառելում իքսինի արժողութենէն յաւել գին չինք չառնեմք , գոտած բանն մերն չչինեմք , և փոխով առածն՝ անխափան յետ վճարեմք : Սաղ , կԲ , 11 : Ա , կոր , Ղ , 9. 10: Եսայ , ԺԸ , 6: Եզեկ , ԼԲ , 15 :

Հ . Ինն երորդ պատուիրանքն ո՞ր ինչ է :

Պ . Մի՛ սուտ վկայեր քո ընկերի վերայ : Ելք , Ի , 16 :

Հ . Այս պատուիրանքն ի՞նչ է արգելում :

Պ . Արգելում է որ սուտ վկայութիւն չտամք , մեր մեղքն չդնեմք այլոց վերայ, չգրպարտեմք անմեղին, և չյայտնեմք այլոց մեղքն բամբասելով : Յակ : Դ . 11: կորս , Ղ . 9. 13: Եսայ . Ա . 15. 17.

Հ . Տասներորդ պատուիրանքն ո՞ր ինչ է :

Պ . Մի՛ ցանկանար քո ընկերի կնոջն , կամ նորա տանն, և ամ ունեցածինմի՛ ցանկանար, Ելք Ի, 17:

Հ. Այս պատուիրանքն ի՞նչպէս արդեօք։

Պ. Արդեօքմայ սրտի և մտաց բոլոր չար ցանկութիւն, հրամայումայ ընկերին չզրկեմք, և օտարի իքմին մերն չշինեմք։ Մատ, Ե, 28։ Հռովմ, Զ, 12. Առակ, Ե, 3։ Ղևտ, ԺԹ, 13.

Հ. Մեղքն քանի՞ տեսակ ան։

Պ. Երկու, այսինքն՝ սկզբնական և ներգործական։

Հ. Ի՞նչպէս սկզբնականն և ի՞նչպէս ներգործականն։

Պ. Սկզբնականն՝ մեր Հայր Ադամիցն սկսած ունեմք բոլորս, որ մկրտութիւն կջնջուի. Իսկ ներգործականն մկրտութենից յետո ինչ որ մեր կամքովն կգործեմք էնպէս, Հռովմ, Ե, 19։ Ա. Յովհ, Գ, 4։ Եսայ, ԺԹ, 2։

Հ. Ներգործական մեղքն քանի՞դանպէս կբաժանուին։

Պ. Երկու, այսինքն՝ մահացու և ներելի։ Ա, Յովհ. Ե. 16, 17։

Հ. Ի՞նչան մահացուքն։

Պ. Էնան, որ երբ տեղեակ ելնեմք օրինացն Աստ, և ընդդէմ խղճմտանաց կամաւ և յօժարութիւն գործեմք չարութիւն։ Ղուկ, ԺԲ, 47։

Հ. Ի՞նչան ներելիքն։

Պ. Էնան, որ երբ ապիտութիւն կամ անմտաբար յանկարծ սխալեմք։ Ղուկ, ԺԲ, 48։

Հ. Մահացու մեղքն քանի՞ դանպէս անՀ

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄ
ԹԱՆԳԱՐԱՆ

Պ. Եօթնեն, այսիքն՝ Հպարտութիւն, Նախանձ, Բարկութիւն. Ծուլութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն, և Բղջախոհութիւն։

Հ. Հպարտութիւն ի՞նչայ։

Պ. Այնէ. որ մարդն մեծ համարումն կտայ իւր անձնին, ոչում չի հնազանդել, և կնախատի իւր ընկերացն։ Հռովմ, ժբ. 16։ Յակ, դ, 16։

Հ. Նախանձն ի՞նչայ։

Պ. Այնէ, որ մարդն ցաւելով կտրտմի իւր եղբօր հոգևոր և մարմնաւոր աջողակութեամ բարւոյվերայ։ Իմաստ, բ. 24, 25։ Մատ, ի, 14, 15։ Յակ, գ, 14—16։

Հ. Բարկութին ի՞նչայ։

Պ. Հոգւոյ կրից բորբոքութիւնայ, որ վրէժ առնի իւր կրաց զրկանաց համար։ Ղուկ, ժբ. 16։ Հռովմ, ժբ, 19։

Հ. Ծուլութին ի՞նչայ։

Պ. Այնէ, որ մարդն անփոյթ մնայ իւր հոգւոյ փրկութեան համար, չգործի առաքինութի, և չպահի Աստուծոյ պատուիրանքն։ Մատ, իե, 24, 30։ Հռովմ ժբ, 11։ ժդ, 11։

Հ. Ագահութին ի՞նչայ։

Պ. Զափազանց ցանկութեամբ հարստութի ժողովելնայ մանաւանդ թէ անիրաւ կերպ ժողովեն։ Ղուկ,

գ, 14: ա, կորն, ՁԼ, 10. կողոս. գ, 5:

Հ. Որկրամոլութիւն ի՞նչայ:

Պ. Անհագ ուտել խմելնայ, և արձակ թոյլտու-ութի վատ կրից: Ղուկ, իա, 34: Հռովմ, ԺՁ, 18:

Հ. Բղջախոհութիւն ի՞նչայ:

Պ. Զափազանց մարմնական ցանկութիւն հետևելնայ, որ միշտ ընդդէմ է հոգւոյ և մարմնոյ առողջութիւն: Առաք, Է, 3—23: Լա, 3: Ղուկ, ԺԷ, 13. 30:

Հ. Այն մեղքերն ո՞րնան, որ Աստ վրէժխնդիր կէնի:

Պ. Ըստոնքան, անմեղ մարդոյն սպանել, արուա-գիտութի, զրկանք աղքատաց, և մշակաց վարձն կտրել: Սաղ. Է.Ղ: ա, կորն, Ձ, 9. 10: Ղևտ, ԺԹ, 13:

Հ. Քանի՞ առաքինութիք կան ընդդէմ եօթն մոլու-թիւց:

Պ. Եօթն, այսինքն՝ ընդդէմ հպարտութիւ, խոնարհութի: Մատ. ԺՁ. 29, Ղուկ, ա, 48:

Ընդդէմ նախանձու՝ բարեհաճութի, Մատ, Է. 23—26:

Ընդդէմ բարկութիւ՝ հեզութի: Մատ, Է, 4. 9: Սաղ. ԻԴ, 9: ԼԴ, 3:

Ընդդէմ Ագահութեան։ Առաստաստութիւն Մատ, Թ, 13։ Հռովմ. ԺԲ. 13։ Բ Կորն. Ը. 2։

Ընդդէմ Ծուլութեան։ Արիութիւն։ Հռովմ ԺԲ, 11։ Կողոս, Ա. 11։

Ընդդէմ Ուրկրամոլութեան։ Պահեցողութիւն Մատ, Զ, 16։ Յովէլ, Բ. 12։

Ընդդէմ Բղջախոհութեան։ Ողջախոհութիւն։ Ղուկ, Ա. 34։ Հռովմ, ԺԳ, 13։

Հ. Մեղքն քանի՞ բանով կգործուի։

Պ. Երեք, այսինքն՝ խորհրդով, բանիւ, և գործով։ Սաղ, Ա, 1։ Յակ, Գ, 2։ Յովհ, Գ. 20։

Հ. Պատմի՛ր մին մին որ իմանամ։

Պ. Խորհրդով մեղանչելն է՝ որ մեր սրտումն չար կխորհեմք։ Բանիւն է՝ որ մեր բերանից յուշունց կհանեմք։ Գործովն է՝ որ ձեռնէրով կամ անձնով մեղք կգործեմք։

Հ. Քանի՞ բանէր կան, որ մարդոյն կլսխայնեն մեղք գործելուց։

Պ. Չոք, այսինքն՝ Մահն, ահեղ դատաստանն, դժոխքն ահագին, և արքայութիւնն անճառ։ Ի ժամագ։

Հ. Մեք մի միայն քրիստոնէական հաւատոյ որպիսու։

թիւն ճանաչելով կխասանեմք փրկութիւն թէ ոչ։

Պ. Մի միայն ճանաչելով չեմք խասանել։

Հ. Ընդէ՞ր։

Պ. Քանզի հաւատքն առանց գործոց կնմանուէն մեռած մարդոյ։ Յակ, Բ, 24, 26։

Հ. Բարի գործքն ո՞րն են։

Պ. Աղօթք, Պատարագ, և Ողորմութիւն։ Մատ, Զ։ 22։ Ղուկ. Բ, 37։ Գործ, Ժ, 4։ Տօբ, Դ, 8։

Մասն Հինգերորդ

Հ. Ի՞նչպէս վերջին Դատաստանն։

Պ. Յետ քան արդար դատողութեան այ, որ երկրորդ անգամ կգոյ աշխարքի վերջումն, և կդատի կենդանեաց և մեռելոց։ Մատ, ԺԶ, 27։ Բ, Տիմ։ Դ, 7.8։

Հ. Ի՞նչպէս կդատի զքս կենդանեաց և մեռելոց։

Պ. Յառաջիւր Աստային կարդողութեն յարութիւն կտայ մեռելոց, և յետոյ կենդանեաց հետ կկոչի դատաստան։ Յովհ, Ե, 27—29։

Հ. Արդարոց մարմինն յետ յարութիւն առնելուց ի՞նչպէս կլինեն։

Պ. Պայծառ, և փառաւոր կլինեն արեգական նման, նուրբ, թեթև, անապական և անմահ, կենդան

յաւիտեան : Մատ , ժդ , 43 : Փիլիպ , դ , 7 : ա , կորն , ժԷ , 42 ,

Հ . Ի՞նչպէս հատուցումն կլինի արդարոց և մեղաւորաց :

Պ . Արդարքն կժառանգեն երկնքի արքայութիւն , և մեղաւորք կմտանեն յաւիտենական դատապարտութիւն մէջ : Մատ , իԷ . 34 . 41 :

Հ . Ինչպ՞ էրկնից արքայութիւն :

Պ . Մին երանաւէտ և մշտնջենական հանգստեան վիճակայ . որ պատրաստուածայ Աստծանից : Բ , Թեսալ , ա , 5—7 :

Հ . Ի՞նչ վայելչութիւք կլինեն արդարոց համար յերկնքումն :

Պ . Անչափ ուրախութիւն կլինի Աստուային տեսութիւն յանդիման , և մշտնջենական կենակցութիւն կանեն քեռի՝ Հրեշտակաց՝ և սրբոց հետ : Յովհ . ժդ , 22 : ժԷ , 24 : ա , Յովհ , դ , 2 : ա , Թեսալ դ , 16 : Եբր , ժբ , 22 :

Հ . Ի՞նչպ յաւիտենական դատապարտութիւն :

Պ . Մին Թշուառ կորստեան վիճակայ , լի հոգւոյ և մարմնոյ սարսափելի տանջանքներով : Մատ , իԷ , 46 :

Հ . Ի՞նչպէս պատիժ կլինի մեղաւորաց համար էն վիճակումն :

Պ , Մինգամայն կզրկուեն Աստ երանական տեսու-

թենից , և տագնապեալ խղճմտանք և յուսահատ կենան յաւիտենական տանջանքում : մատ , է , 23 : ը , 12 : իբ , 46: Մարկ,թ , 47 :

Հ . Ամենայն մեղաւորք՝ մի տեսակ կտանջուե՞ն :

Պ . Ո՛չ, այլ ամ մարդ իւր մեղաց համեմատ կկրի պատիժն : Ղուկ , ժբ . 47 : 48 :

Հ . Ուրեմն ի՞նչպէս պէտքայ , որ այն յաւիտենական երանութեն հասանեմք մեք :

Պ . Պէտքայ մեզ , որ միշտ առաքինութի գործեմք, և ամ տեսակ չար սովորութեն խսպառ թողնեմք , և խնդրեմք Աստծանից որ սուրբ պահի մեզ և մեր էոգին, շունչն, և մարմինն անարատ պահպանի մինչև 'ի գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , Ամէն : Մատ , իդ , 46 :

Եթէ զայս գիտէք , երանելի՛ եւ էք՝ թէ առնիցէք զայս : Յովհ ,ժգ, 17:

ԱՂՕԹՔ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ :

Հայր մեր՝ որ յերկինս ես . սուրբ եղիցի անուն քո . եկեսցէ արքայութիւն քո . եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի : Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր . Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք

թողումք մեր ոց պարտապանաց : Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն , այլ փրկեա զմեզ 'ի չարէ : Զի քո է արքայութիւն , և զօրութիւն , և փառք յաւիտեանս . Ամէն :

ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ ՄԱՐԻԱՄ :

Ողջոյն քեզ՝ Մարիամ՝ լի շնորհօք , ուրախ լեր բերկրեալ . Տէր ընդ քեզ . Օրհնեալ ես դու 'ի կանայս՝ և օրհնեալ է պտուղ որովայնի քո՝ Յիսուս . սրբուհի Մարիամ մայր Աստուծոյ՝ բարեխօսեա վասն մեր մեղաւորացս , այժմ և 'ի ժամ մահու մերոյ . Ամէն :

Անկանիմք առաջի քո Սուրբ Աստուածածին , և աղաչեմք զանարատ զկոյսդ . բարեխօսեա վասն անձանց մերոց . և աղաչեա զմիածին որդիդ՝ փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց : Որ արձակիչդ ես կապելոց՝ պարգևատու ամենեցուն . այսօր հայցմամբ ծերունւոյն՝ արձակեա և զիս զբաղմամբդ 'ի կապանաց մահու 'ի կեանսն յաւիտենից :

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբն՝ Տէր . ընկալ զաղաչանս մեր , և կեցո :

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ։

Հաւատամք 'ի մի Աստուած հայրն ամենակալ յաւարիչն երկնի և երկրի. երևելեաց և աներևութից։ Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ. ծնեալն յԱստուծոյ հօրէ միածին. այսինքն՝ յէութենէ հօր։ Աստուած յԱստուծոյ. Լոյս 'ի Լուսոյ Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ՝ և ոչ արարած։ Նոյն ինքն 'ի բնութենէ հօր. որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի. երևելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ 'ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ թաղեալ. յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ կոյ վախճան։ Հաւատամք և 'ի սուրբ Հոգին. յանեղն և ի կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ի յորդանան. քարոզեաց զառաքեալն. և բնակեցաւ 'ի Սուրբսն։ Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի։

'ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն. ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ 'Ի յարութիւն մեռելոց. ի դատաստանն յաւիտենից. հոգւոց և մարմնոց։ Յարքայութիւնն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս։

Մինչև գոսպ են հաւապոյ բանք։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն՝ յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ Հոգի։ Կամ թէ՝ յոչ էից եղեն կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին։ Եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական Սուրբ եկեղեցի։

Իսկ մեք փառաւորեցուք որ յառաջ քան զյաւիտեանս՝ երկիրպագանելով սրբոյ երրորդութեանն և մի Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս՝ յաւիտենից. Ամէն։

ԱՂՕԹՔ

ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ 'Ի ՔՐԻՍՏՈՍ

ԱՐԱՐԵԱԼ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼՈՅ։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ Հայր և Որդի և սուրբ Հոգի, անեզ և անմահ բնու-

թիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. և ողորմեա՛ քո արարածոց, և ինձ բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն, արարիչ լուսոյ՝ և հալածիչ խաւարի. հալածեա՛ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան, և լուսաւորեա՛ զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ 'ի հաճոյս, և ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ. և ողորմ՛։

Հա՛յր երկնաւոր Աստուած ճշմարիտ՝ որ առաքեցեր զՍիրդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք. և ողորմ՛։

Որդի՛ Աստուծոյ Աստուած ճշմարիտ՝ որ խոնարհեցար 'ի Հայրական ծոցոյ՝ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան. խաչեցար՝ թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. յիշա՛ զիս որպէս զաւազակն՝ յօրժամ գաս արքայութեամբ քով. և ողորմ՛։

Հոգի՛ Աստուծոյ Աստուած ճշմարիտ՝ որ իջեր 'ի Յորդանան և 'ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և

առաջի քո. մաքրեա զիս վերստին Աստուածային հրա-
քով որպէս հրեղէն լեզուաք սուրբ զառաքեալսն. և
ողորմ՚ :

Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով
և մարմնով իմով. մի՝ յիշէր զմեղս իմ զառաջինս վան-
անուանդ քում սրբոյ. և ողորմ՚ :

Տեսող ամենայնի՝ մեղայ քեզ խորհրդով բանիւ և
գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա
զանուն իմ՚ի դպրութեան կենաց. և ողորմ՚ :

Քննող գաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ և ակամայ
գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա
մեղաւորիս, զի՚ի ծննդենէ սուրբ առազանին
մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածու-
թեանդ քո զգայարանաք իմովք, և ամենայն անդամք
մարմնոյս. և ողորմ՚ :

Ամենախնամ Տէր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ
քո սուրբ՝ ոչ ևս հայիլ յարատ, և ականջաց իմոց՝ ոչ
ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝
ոչ խօսիլ զստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ
զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրա-
ւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ՚ի ճանապարհս
անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինել
միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմ՚ :

Հոգի կենդանի Քրիստոս՝ զհոգի սիրոյ քո զոր արկեր

յերկիր, բորբոքեա յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիզճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո 'ի սրտի իմում. և ողորմ՝,

Իմաստութիւն Հօր Յիսուս՝ տուր ինձ իմաստութիւն, զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քո յամենայն ժամ. 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեա զիս. և ողորմ՝ :

Կամեցող բարեաց Տէր կամարար՝ մի՝ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինիլ միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմ՝ :

Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողորմ՝ :

Խնամող արարածոց՝ պահեա նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փորձութեանց դիւաց, և 'ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմ՝ :

Պահապան ամենայնի Քրիստոս՝ աջ քո հովանի լիցի 'ի վերայ իմ 'ի տուն և 'ի գիշերի. 'ի նստիլ 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել՝ զի մի՝ երբեք սասանեցայց. և ողորմ՝ :

Աստուած իմ՝ որ բանաս զձեռն քո, և ընդ զա-

մենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչև յաւիտեան. և ողոր՛" :

Դարձուցի՛չ մոլորելոց՝ դարձո՛ զիս 'ի չար սովորութեանց իմոց 'ի բարի սովորութիւն. և բևեռեա՛ 'ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենոյն, և զսէր արքայութեանն, զի զղջացայց 'ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. և ողոր՛" :

Աղբիւր անմահութեան՝ աղբերացո՛ 'ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողոր՛" :

Պարգևի՛չ ողորմութեան՝ պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով, և բարի գործով, և սուրբ Մարմնոյ և Արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողոր՛" :

Բարերա՛ր Տէր՝ հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխուով անցուցանել ընդ չարութիւն այսոցն որք են 'ի ներքոյ երկնից. և ողոր՛" :

Լոյս Ճշմարիտ Քրիստոս՝ արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց 'ի կոչման աւուրն, և հանգչիլ յուսով բարեաց յոթևանս արդարոց մինչև յոր մեծի գալստեան քո. և ողոր՛" :

Դատաւոր արդար՝ յորժամ գաս փառաւք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մոռանէր 'ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմ" :

Ամէնողորմ Տէր՝ ողորմեա ամենայն հաւատացելոց 'ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն որ առիս յանցանաց, և դարձո զնոսա 'ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին. և ողորմ" :

Փառաւորեալ Տէր՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա 'ի բարի զինդրուածս իմ՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և սրբոյն Յովհաննու մկրտչին, և սրբոյն Ստեփաննոսի նախավկային, և սրբոյն Գրիգորի մեծոյ լուսաւորչին, և սրբոց Առաքելոց՝ Մարգարէից՝ Վարդապետաց՝ Մարտիրոսաց՝ Հայրապետաց՝ Ճգնաւորաց՝ Կուսանաց, և ամենայն սրբոց քոց Երկնաւորաց և Երկրաւորաց : Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից, Ամէն :

ԱՂՕԹՔ ՅՈՎՀԱՆՆԻՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ։

որ 'ի դէմս Մանկանց

Առ Հայր Աստուած։

Աստ յամենայն տուրս բարեաց՝ փարեցամացուցիչ աղքատաց, էապէս և միշտ բարի. Հայր տեառն մերոյ Յիսուսիս որով արարեր փրկուի կորուսեալ ծննդոյն Ադամայ, և կանգնեցեր վերատին զորս 'ի ձեռն նը՝ ստեղծեր 'ի պատկեր կերպարանի քո՝ զանկեալս 'ի կենաց, և զնենգիչն կենաց ծառայից քոց զխորամանկն 'ի բանսարկուիչ և յամ որինչ ոչ է հաճոյ քեզ՝ արկեալ 'ի խնարն, ընկեցեր յիշխանութենէ չարչարանաց քոյ քո, և զյաղթահարեալն 'ի նմանէ հաներ 'ի վերայ գլխոյ նորա։ Հայեա քաղցրութիւնք 'ի ծառայ քո անպիտան. և մի տար թոյլ յաւնել ինձ հակառակ գազանին չարի, մանուկ եմ ես և արհամարեալ, ամենակատար զօրութիւնդ և անսկիզբն էութիւնդ լեր ինձ ամրութիւն և յարկ ծածկութեան 'ի պատերազմաց նորա, հայր որբոց. խնայեա յանկատարութենէ տիոց մարմնոյ և մտաց իմոց, երկնչիմ 'ի կամակոր և 'ի թունալից օձէ անտի, գուցէ անկայց վա՛ դիւրագայթ բնութեան և անլիութեան տիոցս և խակութեան մտաց իմոց ընդ խած-

մամբք ժանեաց նորա։ Ապրեցո զիս տէր, զսհ անյաղթելի զորութեանդ քո արկանելով 'ի վերս, և տուր ինձ կատարութիւն մարմնոյ, հոգւոյ արութիւն, բարոյ հաստատութիւն, կեանս հաճոյականս բարեսէր կամաց քոց։ Զինեա զիս ամ զգուշական սպառազինութեամբ ընդդէմ չար պատերազմողին, ոպ զդաւիթ ծառայ քո հակառակ գողիադու, հան զիս 'ի գբոյ տառապանաց անգիտութեանդ, ուր ոչ գոյ ջուր քաղցր և ամենախորժ կէցուցիչ սիրոյ քո, որ հաներ զՅովսէփ 'ի գբոյ մահու և 'ի սանէ կապանաց յաթոռ թագաւորութեանդ։ Պարգևեա ինձ զսիրելին քո զիմաստութիւն և զհանճար, գնալ առաջի քո անմոլար ճանապարհաւ և անսայթաք ոտիւք մտաց՝ որ եռուր զնոգի քո 'ի վերս մանկանն Դանիէլի 'ի պատիւ նմա, և 'ի կշտամբեանս վաւաշոտութեանդ զսկատեալ և մոլեգին ծերոցն։ Ապաքեա ինձ, Հայր. քաջալերութիւն 'ի բարձանց քոց, և զորութիւն աներկեղութեանդ յամենեցունց՝ որք կան հակառակ հրամանաց քոց, որպէս զի մի խաբեցայց 'ի սնոտի կենցաղոյս այսորիկ, որ սովորէ գողանալ զմիտս անհաստատս և դիւրաշարժս, և հեռացուցանել 'ի քէն, կարծիս տալով զեղծանելեացս՝ որպէս թէ ի քեն կայունք և անշարժելիք։ Ամ զորացուցեր զմանկունս զԱնանիանն ընդդէմ կալ բռնաւորական հրամանացն, և ընտրել զմահու ծանրութիւն, և խիստ կապանսք 'ի հուր բորբոքեալ սաստկապէս, զի մի ինչ

յոչ հաճոյիցն քեզ երևեցի 'ի նոսա, և զի մի հեռասցին 'ի սիրոյ քումմէ. որ է գանձ անճառելի և ճոխութիւն յաւիտենական։ Բարձրացո 'ի ստորայնոցս զմիտս իմ, և մերժեա 'ի հոգւոյ իմմէ զբաղձուն սորա, խաւարեսցին աչք մտաց իմոց 'ի տեսիլ սիրոյ սորա, զի զքեզ միայն տեսից կորովութեամբ աչաց 'ի պարգևէ քումմէ լոյսդ անիմանալի, 'ի քեզ ցնծացայց անտխուր և անլուծանելի ուրախութեամբ։

Մանկութիւն իմ քեզ և 'ի սէր քո զբաղեսցի, կատարելութիւն իմ քեզ փառաւորեսցի, ծերութիւն իմ քեզ պարարտասցի, մահ իմ քեզ կենդանասցի. և ամ կենաց իմոց դու եղիցիս մատակարար և կարգաւորիչ վայելչապէս, Տէս մարդասէր զպաղատանս անձին իմոյ, լուր աղօթիցս շրթանց իմոց՝ պարգևեա ինձ զխնդրուածս իմ, մի ունայն արձակեսցես զիս յերեսաց քոց թագաւոր առատապարգև. զարդարեա զանզարդութիւն իմ կատարմամբ աղօթիցս այսոցիկ, զի եղէց ոչ բնաւ հեռանալով 'ի քէն՝ թոշակեալ ամ պարգեւօք բարեաց, զոր տեսեալ թշնամեաց իմոց որք առեն զքեզ, ամաչեսցեն նկուն եղեալ՝ և որք սիրեն զքեզ՝ փառաւորեսցին առ 'ի քէն, և լիցի մեծարանս անարգութիւն իմոյ, և ես արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Որդւոյ քում միածնի, և ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ամէն։

ԱՂՕԹՔ

Ա՝ ՈՒՐԻՆ։

Ի լուսոյ ճշմարտէ համագոյակ լոյս, յԱստուծոյ Աստուած, 'ի կենաց կեանք, բան Հօր և Որդի միածին. անժամանակ, անեղանելի, արարիչ ամի, որ հաճեցար լինել որդի մարդոյ, և արարիչդ՝ արարած մարմնով, բանդ՝ մարմին, անեղդ՝ եղեալ, անմահդ՝ մահկանացու, փոքր՝ մեծդ և ճախդ՝ աղքատ, որ 'ի սկզբանէ ընդ Հօր և միշտ էակ՝ մանուկ 'ի կուսէն, իմոյս լեր կատարիչ մանկութեանդ։ Քանզի դու և ամ ըստ ինքեանց անկատարից ես լրական զորութեամբ քով, և արարիչ որոց 'ի զգայութեանդ, և իմանալեաց ամենեցունց։ Իմաստութիւդ Հօր, տուր ինձ անուանակիր լինել՝ ճշմարիտ իմաստութեամբ քով՝ և հրամայեա իմաստնանալ ինձ, և անճառելիդ կատարելութի կատարեա զիս հոգւով։ Նորոգեացի որպէս արծւոյ զորութի մանկութեանդ իմոյ, վասն լինելոյ քո մարդ նոր։ Մի տար կռուել յիս հընութեանդ կերպարանին, և նմանութեանդ՝ զառիթ հնոյն մարդոյ, և եթէ ընկալայ երբեք, զերծ 'ի բաց՝ որպէս զքուրձն սդոյ յամ ազգէ մարդկան, դաստիարակեա զխամութի մտաց իմոց, ուստ ինձ գնալ 'ի հրամանս քո, և մի տար թոյլ սխալոտ և դիւրայանց հասակիս այսորիկ՝ տղայութենն բարուք՝ ստահակութեամբ գնալ, այլ

ըստ աստուածային հեզութեանդ քո և ըստ մեծի և անհասանելի գթութեանդ՝ յարամերձ առիս կաց ցեն շնորհաց քոց պահպանիչ զգուշութիւնք 'ի փրկութիւն կենդանութեանդ ծառայի քո։ Եւ հաճոյութիւնք քաղցր սիրոյ կամաց քոց՝ եղէց հանդարտեալ 'ի բնաւորականաց ընդդիմութենէ հոգւոյ մարտից՝ այլ և հմուտ առ պատերազմել՝ քոյով նախամարտկութիւն, և անհերքելի ամենայաղթ զօրութիւն անվէր՝ առանց լքման 'ի ձեռանէ քումմէ՝ կալով հեալով։

Լեր ընդ իս տէր իմ 'ինքնչել և 'ի յառնել՝ 'ի նստել 'ի տան և գնալ 'ի ճանապարհի, և շնորհեա ինձ զքեզ զգործս իմ 'ի փառս քո և 'ի հաճութիւն քեզ կատարել։ խօսք իմ օրէնք քո եղեցին, և հոգի իմ 'ի պատուիրանս քո խոկասցէ, և փոխանակ քեզ զբօսանաց մանկականաց միայն սէր քո բորբոքեսցի յոգի իմ։ Պարգևեա ինձ և արտօսր առատապէս, զի արժանի եղէց կալ առաջի քո որպէս մաղթող կատարեալ՝ և լուանալ զաղտեղութիւն մտաց իմոց, և զոր ինչ յանցեայ գործովք 'ի մուտացմանէ պատուիրանաց և երկիւղի քո ահաւորի և սքեյ, և եղէց մաքուր և զսեալ յամ տղմոյ մեղաց աղտեղութենէ, որպէս զմի 'ի ծառայից քոց։ շնորհեա ինձ Աստուած իմ Յա արժանի լինել մատուցման փառաբանութենէ վայելչականի, և օրհնել արժանապէս զմեծութիւն տէրութենէ քո ընդ հօր և ընդ հոգ-

Հոյդ սրբոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ԱՂՕԹՔ

ԱՌ ՀՈԳԻՆ ՍՈՒԲ։

Անքաւելի և բազմազան շնորհաց առատապէս մատակարար և բաշխիչ Հոգիդ Սբ, Հոգի ճշմարտութեան, Հոգի ելոյ 'ի Հօրէ, Հոգի մխիթարիչ, Աստուած ճշմարիտ. ամենայնի արարիչ ընդ Հօր և ընդ Որդւոյ, և Աստուածային նախախնամութեամբ քով բերող զամ։ Որ ըստ կամաց քոց տիրականաց բաժանես ըստ իւրաքանչիւր չափու հաւատոց, և եւս առաւել զառ 'ի քէն առատահոս շնորհաց պարգեւս, և անճառելի գթութեամբ սիրոյ քո ամենազան բարութեամբ հարստացուցեալ բարեզարդապէս ճոխացուցանես զեկեղեցի քո՝ առաքելովք, մարգարէիւք, վարդապետօք, և այլովք դասուք արժանաւորեցելովք ճշմարտին պարգեւաց քոց, յորում եդիր և զթողութեամբ մեղաց վստահութիւն, և տկարութեամբ մերոյ բնութեան մարդասիրապէս եռուր զօրութիւն վերսին ուղղութեամբ և կենդանութեամբ 'ի մահուանէ մեղաց։

Հայեա քաղցրութեամբ քով ամենագութ և յիս անարժան ծառայս քոյ, և տուր ինձ սիրտ բեկեալ և հոգի զղջման,

զօրացո զլքու�մտաց իմոց , և հալածեա զանյուսութիւն
ստուերս յոգւոյ ծառայի քում, և մեծութիւն ողորմութիւն
քո՝ զսաստկութիւն անօրէնութիւն իմոյ՝ որ հարկանէ ցանկ
զիս տանջեալ անբժշկական խղճիւ , քաւեա որպէս
բարերար Աստուած , զտիղմն անառակութիւն գործոց
իմոց , լուա ամենասուրբդ և իշխան սրբութիւն , 'ի
գլորմանէ մեղաց կանգնեա , զխաւար նորա հալածեա ,
և զվէրս առ 'ի նմանէ զսատակողականս անձին իմոյ՝
բժշկեա , զպատճառս չարեացն իւրովք նենգութիւնքն
և զամ պատրանս խաբէութիւն նորա մերժեա յինէն , և
զհաւանութիւն անմտութիւն իմոյ անտես արա և մի յիշեր :
Մեծապէս անսրինեալ ցասուցի զկամս քաղցրութիւն քո,
և ոչ իշխեմ համարձակապէս մատուցանել աղաչանս
առաջի քո , քանզի երկնչիմ յիշեալ զոր ինչ գործեցի,
գուցէ անարժան գոլով և լի աղտեղութիւնք՝ դառնացուցից
միւսանգամ զամենասուրբ կամս քո: Բայց նեղութիւն
տարակուսանաց անձին իմոյ եղկելւոյ և անհրաժեշտ
երկեւղ վրէժխնդրութիւն՝ իշխել կալ առաջի քո
հարկեցուցանէ զիս , մանաւանդ անիմանալի քաղցրու-
թիւն քո և անեզրական սիրոյ վստահութիւն :

Եւ արդ ողորմած, տես ուրքան պէտս ունիմ բարերա-
րութիւն քում , և հայեաց քանի՞ սաստիկ են վիշտք
անձին իմոյ թշուառացելոյ , մատիր խոնարհեա կարողդ-
ամի բժշկել զանբժշկելի հարուածոցս ծանրութիւն մե-

ծուլեմ՝ , քանզի հնարաւոր են քեզ անհնարինք , և ոչ կարէ կալ առաջի լուսոյ քաղցրութեամբ քո խաւար ատելի վարուց իմոց , և տեղի տան վէրք նեխեալ հոգւոյ իմոյ բժշկական զօրութեամբ քո մեծի : Եւ զի՞նչ իցէ բանութիւնքի հակառակ զօրացեալ յընդհանրականս , որ կարիցէ կալ և տեղի ունել ընդդէմ ամենազօր հրամանի քում : Վասն որոյ աղաչեմ , նայեա և մի լուր արտասուաց իմոց , ջնջեա զանօրէնութիւնս իմ , և դարձո յուրախութիւնքի զսուգ իմ , զմոլորեցուցիչն հալածեա յինէն , և զմոլորեալ ծառայս քո խնդրեա , ընկալ և ժողովեա 'ի միարան հոտի քո , և ողորմութիւնքի 'ի քէն գտանելոյ արժանի արա : Որ ոչ դարձուցանես զերեսս քո յորոց խնդրենն , մի՝ և յինէն դարձուցաներ , որ ողորմիսդ թշուառացելոց յամ ժամ , տուր և ինձ մասն յողորմութիւնքդ , որ խնայեսդ քաղցրութիւնքդ յորս դառնան 'ի ճանապարհաց իւրեանց չարաց , խնայեա և յիս , թէպէտ և անագան ուրեմն խնդրեմ դառնալ , որ ոչդ ուրեք պահես ոխս յեսս հրաժարելոյ յատելեացն քեզ գործոց՝ լեր և առիս անոխակալ : Մեծապարգեւդ՝ տուր ինձ սակաւիկ , և յամենայնի առատդ մի զրկեր զիս յողորմութիւնքդ , քաղցրահայեացդ առ որս 'ի քէն գոյացան , և զիս զձեռաց քոց գործ մի անտես առներ , զի ընդ ամենեսեան ոչք սիրեն զքեզ և ես արժանի եղէց սիրել և պահել զպատուիրանս զուգապէս

նոցա 'ի փրկութենէ անձին իմոյ, և փառաւորել ընդ նոսին զքեզ՝ օրհնիլ և ճշմարիտ խոստովանութիւնք ընդ Հօր և ընդ Որդւոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ամէն։

ԱՂՕԹՔ

ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ։

Տէր ամենակալ՝ Աստուած Աբրահամու՝ Իսահակայ՝ Յակոբայ և զաւակի նոցա արդարոյ. ամենակալ Տէր՝ թող զմեզս իմ։

Որ արարեր զերկինս և զերկիր՝ և զամենայն զարդ նոցա. ամենակալ"։

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո, փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով. ամենակալ"։

Որ ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան քո. ամենակալ"։

Ընդեր է մեծվայելչութիւն փառաց սրբութեան քո. սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց 'ի վերայ մեղաւորաց. անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենակալ"։

Դու Տէր բարձրեալ՝ գթած՝ երկայնամիտ՝ բազում-

ողորմ. և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ՞":

Դու Աստուածդ՝ ոչ եղէր ապաշխարութիւն վասն արդարոցն Աբրահամու՝ Իսահակայ և Յակոբայ՝ որք ոչ մեղան քեզ. ամենակալ":

Այլ եղէր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս, զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենակալ":

Զեմ արժանի հայիլ և տեսանել զբարձրութիւնս երկնից՝ 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամենակալ":

Կորացեալ եմ ես 'ի բռնութենէ կապանաց երկաթից, և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենակալ":

Բարկացուցի զսրտմտութիւն՝ և զչար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր՝ և բազմացուցի զցասումն անձին իմոյ. ամենակալ":

Եւ արդ Տէր՝ խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ՝ և հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ. ամենակալ՞":

Մեղայ Տէր՝ մեղայ՝ և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ":

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝ թող ինձ Տէր՝ թող ինձ. և մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. ամենակալ":

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ Տէր. և մի՛ յիշեր

զբարին իմ. և մի՝ պարտաւորեր զիս ընդ ի՛ջեալն 'ի ներքոյ երկրի ջարեօք. ամենակա՛լ" :

Զի դու Աստուա՛ծ, Աստուա՛ծ ապաշխարողաց ես. և յիս ցոյց զբարերարութիւնդ քո, որ անարժան եմ. ամենակա՛լ" :

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քում. և ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. ամենակա՛լ' :

Զքեզ Տէ՛ր օրհնեն ամենայն զուարթունք երկնից. և քո՛ են փառք յաւիտեանս. Ամէն :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն Տէ՛ր՝ թող ինձ զմեղս իմ :

Բազումողորմ Տէր՝ ողորմեա՛ ինձ :

Աստուա՛ծ՝ քաւեա՛ զիս զմեղաւորս 'ի մեղաց, և կեցո՛ :

Արարի՛չ իմ և յոյս՝ Աստուա՛ծ, գթա՛ յիս 'ի մեղուցեալ ծառայս. և ողորմեա՛ ինձ բազմամեղիս :

Ամենօրհնեա՛լ Սրբուհի՝ և միշտ կոյս Աստուածածին Մարիամ. բարեխօսեա՛ առ Տէր վասն իմ մեղաւորիս :

Ամենայն սուրբք Աստուծոյ՝ բարեխօսեցէ՛ք առ Հայր 'ի յերկինս վասն մեր մեղաւորացս.

Քրիստոս Որդի Աստուծոյ անօխակալ՝ ընկալ զաղաչանս մեր. զի 'ի քեզ են ապաւինեալ անձինք մեր։

Յաղթող զօրութեամբ՝ սուրբ և կենդանարար և պատուական խաչիւ քո Տէր՝ պահպանեա զմեզ։

Առաքեա Տէր զհրեշտակ խաղաղութեան քո՝ որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի։

Եւ մարդասիրութեամբ քով յիշեա զմեզ Տէր՝ յիշեա զմեզ, յորժամ գաս արքայութեամբ քով, և օղորմեա մեզ։

Մաղթանք զօրաւոր ընդդէմ ուհատութեան գիշերային. 'ի սրբոյն Գրիգորէ Նարեկացւոյ ասացեալ։ ԺԲ։

Ընկալ քաղցրութեամբ տէր աստուած հզօր՝ զդաւնացողիս զաղաչանս։ Մատիր գթութեամբ առ պատկառեալս դիմաք։ Փարատեա ամենապարգև՝ զամօթական տխրութիւնս։ Բարձ յինէն օղորմած՝ զանընդմիջելի ծանրութիւնս։ Անջրպետեա հնարաւոր՝ զմահացու կրթութիւնս։ Աւարեա միշտ յաղթող՝ զխաբողին հաճութիւնս։ Բացադրեա վերնային՝ զմոլելոյն մառախուղ։ Կնքեա կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս։ Ցրուեա ծածկատես՝ զրմբունողին չար գրտմունս։ Խորտակեա անքննին՝ զմարտողին դիմեցմունս։ Տեառնագրեա քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս։

Պարիսակեա՛ քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս։ Գծագրեա՛ քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս։ Կերպացո՛ զքո նշանդ 'ի հետս ելից մաղթողիս։ Ամրացո՛ քո աջովդ զհանգստեանս խշտի։ Մաքրեացես 'ի հազբից զծածկարան անկողնոյս։ Պահեացես քո կամաքդ զտառապեալ անձն ոգւոյս։ Անխարդախ արտասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս։ Կացուսցես շրջափակ զպարզ զրուդ երկնայնոյ. կարգեսցես 'ի դիմի ընդդէմ դիւացն դասու։ Տո՛ւր հանգիստ բերկրութեա՛ մահահանգոյնս ներհման 'ի խորութեա՛ գիշերիս՝ բարեխօսութեամբ հայցուածոց սրբուհւոյ ածածնիդ և ամենայն ընտրելոց։

Ամիսիսեալ պարուրեա՛ զպատուհան տեսութեանց զդայարանացս իմաստից՝ անզարհուրելի զեռեղմամբ 'ի ծփական խռովութեանց կենցաղական զբաղմանց՝ անրջական երազոց՝ խօլականաց ցնորից։ Ցիշատակաւ քո յուսոյդ՝ անվնասելի պաշտպանեալ. և սթափիեալ վերստին 'ի ննջմանէ ծանրութեանց՝ ամենազգաստ արթնութեամբ հոգենորոգ զուարթութեամբ 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոյ՝ քեզ ամէնօրհնեալ թագաւոր փառաց՝ անճառից փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ յերկինս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք ողորմութեան Յիսուսի Գրիգորի Նարեկացւոյն : ԽԱ :

Որդի աստուծոյ կենդանւոյ . օրհնեալ յամենայնի : Հօրդ աշխարհի անչափին ծնունդ որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ : Որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քո փառաց՝ հալին մեղք . հալածին դևք . ջնջին յանցանք . խզին կապանք . խորտակին շղթայք . կենդանաձնին մահացեալք . բժշկին հարուածք . ողջանան վէրք . բառնին ապականութիւնք . տեղի տան տխրութիւնք . նահանջին հեծութիւնք . փախնու խաւարն . մեկնի մէգն . մերժի մառախուղն . փարատի մռայլն . սպաւի աղջամուղջն . վերանայ մութն . գնայ գիշերն . տարագրի տագնապն . չքանան չարիքն . հալածին յուսահատութիւնքն . և թագաւորէ ձեւն քո . ամենակար՝ քաւիչդ ամենայնի որ ոչ եկիր կորուսանել զմարդկան հոգիս , այլ կեցուցանել . թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ : Զի դու միայն ես յերկնի անճառ , և յերկրի անզննին . 'ի տարր գոյի , և յեզրս ծագաց աշխարհի : Ակիզբն ամենայնի՝ և յամենայնի ամենայն լրմամբ օրհնեալ 'ի բարձունս : Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս . ամէն :

ԳԱԼՍՏԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄԱԿ
ԹԱՆԳԱՐԱՆ